



**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ**

(ԵՄ քաղաքականությունների վերլուծություն)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրամիության անդամ -երկրների կողմից գյուղական բնակավայրերի զարգացման և գյուղական բնակավայրերում զբաղվածության խթանման քաղաքականությունները հիմնվում և ուղղորդվում են Եվրոպական խորհրդի կողմից ընդունված և գործողության մեջ դրված համապատասխան որոշումներով: Հաշվի առնելով այն, որ այդ երկու քաղաքականությունները փոխառնչվում են միմյանց, շատ դեպքերում դրանց հստակ տարանջատումը նպատակահարմար չէ: Ստորև ներկայացված ընդհանուր ակնարկում ներկայացված են այդ երկու բաղադրիչների ընդհանուր նկարագրությունները, ինչպես նաև՝ համապատասխան Ինտերնետային կայքերը, որոնք կարող են օժանդակել համեմատական վերլուծությունների իրականացման ու քաղաքականություն մշակողների կողմից նախընտրելի տարբերակի ընտրության համար:

I. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքականության հիմքը

Գյուղական զարգացման քաղաքականությունների մշակման, ներդրման ու կիրառման գործընթացները սահմանված և տրված են Եվրոպական Խորհրդի համապատասխան որոշումներով:

Գյուղական զարգացման քաղաքականությունը հանդիսանում է Եվրոպական գյուղական բնակավայրերի զարգացման միասնական հենքը: Դրա մշակման աշխատանքները սկզբնավորվել են 2000թ. և միասնական որոշմամբ Եվրոպական միությունում կիրառության մեջ դրվել՝ 2000-2006թթ. ժամանակահատվածի համար:

Որպես գործողությունների ամբողջական փաթեթ, այն սահմանում է երեք հիմնական նպատակ.

- (1) Ձևավորել գյուղատնտեսական և անտառտնտեսական կայուն համակարգ (ընդ որում, անտառային տնտեսությունը, որպես բաղկացուցիչ մաս գյուղական զարգացման քաղաքականությունում ներառվել է առաջին անգամ),
- (2) Բարելավել գյուղական բնակավայրերի մրցունակությունը,
- (3) Պահպանել շրջակա միջավայրն ու Եվրոպայի գյուղական ժառանգությունը:



Սույն փաստաթուղթը հնարավոր է դարձել Ամերիկյան ժողովրդի աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

2005թ. սեպտեմբերին, Նախարարների խորհրդի կողմից հաստատվել է նաև 2007-2013թթ. ժամանակահատվածի Գյուղական զարգացման ռազմավարությունը, որի իրականացման համար սահմանվել է մեկ միասնական ֆոնդ, մեկ ընդհանուր մենեջմենթ և միասնական հսկողության համակարգ: Քաղաքականության նպատակները հստակեցվել են ըստ հետևյալ երեք ուղղությունների.

(1) Բարելավել գյուղատնտեսության և անտառային տնտեսության մրցունակությունը (տնտեսական նպատակ),

(2) Բարելավել շրջակա միջավայրն ու բնական լանդշաֆթը (բնապահպանական նպատակ),

(3) Բարելավել կյանքի որակը գյուղական բնակավայրերում և խթանել տնտեսական գործունեությունների բազմազանեցումը (տարածքային նպատակ):

2.1. Գյուղական զարգացման քաղաքականություն 2000-2006

Խորհրդի 1999թ. մայիսի 17-ի թիվ 1257/1999 որոշմամբ («Եվրոպական Գյուղատնտեսական Կառավարման և Երաշխավորման հիմնադրամից գյուղական զարգացման աջակցության մասին») առաջարկվել է թվով 22 միջոցառում, որոնք Անդամ երկրները կարող են կիրառել իրենց Գյուղական զարգացման ծրագրերում: Միակ պարտադիր միջոցառումը վերաբերում էր գյուղական շրջակա միջավայրին:

Առաջարկված 22 միջոցառումները հետևյալներն էին.

Խումբ 1. Վերակազմավորում և մրցունակություն. Գյուղատնտեսական հատվածի վերակազմավորման խթանմանն ու մրցունակության բարձրացմանն ուղղված գործիքներ հետևյալներն էին՝ գյուղատնտեսական հողի զննումներում ներդրումներ, երիտասարդ ֆերմերների կայացում, ուսուցում, կենսաթոշակի վաղ անցում, գյուղատնտեսական մթերքների մշակում և մարկետինգի բարելավում, հողերի մելիորացիա, հողատեսքերի կատեգորիզացիա, ֆերմաներում մենեջմենթի ծառայությունների կիրարկում, որակյալ գյուղատնտեսական արտադրանքի մարկետինգ, գյուղատնտեսական ջրային ռեսուրսների մենեջմենթ, գյուղատնտեսության հետ փոխկապակցված ենթակառուցվածքների զարգացում ու կատարելագործում, բնական աղետների հետևանքով խաթարված գյուղատնտեսական արտադրության ներուժի վերականգնում և համապատասխան կանխարգելիչ մեխանիզմների ներդրում:

Խումբ 2. Շրջակա միջավայր և հողօգտագործման կառավարում. Գյուղական զարգացման միջոցառումները, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պաշտպանությանն ու բարելավմանը հետևյալներն էին. նվազ բարենպաստ տարածքներ և բնապահպանական սահմանափակումներ ունեցող տարածքներ, գյուղական շրջակա միջավայր, գյուղատնտեսական հողատեսքերի անտառապատում, այլ անտառտնտեսական աշխատանքներ ու միջոցառումներ, գյուղատնտեսության, անտառային տնտեսության և հողօգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պաշտպանություն, կենդանական աշխարհի պաշպանություն:

Խումբ 3. Գյուղական տնտեսություն, գյուղական համայնքներ. Միջոցառումներն էին. գյուղական տնտեսության և բնակչության համար հիմնական

(բազային) ծառայություններ, գյուղերի վերականգնում և զարգացում, գյուղական ժառանգության պաշտպանություն, գյուղատնտեսական և գյուղատնտեսությանը հարակից գործունեությունների բազմազանացում՝ այլ գործունեությունների տրամադրման խթանման և այլընտրանքային եկամուտների ձևավորման համար, զբոսաշրջային և արհեստագործական գործունեությունների խթանում, ֆինանսական ծրագրավորում:

2000-2006թթ. Գյուղական զարգացման ռազմավարությունն առկա է Ինտերնետային էջի հետևյալ հասցեում http://ec.europa.eu/agriculture/rur/index_en.htm. Հիմք ընդունելով Գյուղական զարգացման 2000-2006թթ. ռազմավարությունը և հաշվի առնելով Խորհրդի 1257/1999 որոշումը, անդամ երկրների կողմից մշակվել են նաև ազգային Գյուղական զարգացման Ծրագրերը, որոնք հրապարակայնորեն առկա են Ինտերնետային էջի հետևյալ հասցեում. http://ec.europa.eu/agriculture/rur/countries/index_en.htm. Նույն հասցեում առկա է նաև յուրաքանչյուր երկրի կողմից ներկայացվող՝ Գյուղական զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունը:

2.2. Գյուղական զարգացման քաղաքականություն 2007-2013

Ինչպես վերը նշվել է, 2005թ. սեպտեմբերին ԵԽ կողմից հաստատվել է 2007-2013թթ. Գյուղական զարգացման քաղաքականությունը (Խորհրդի 2005թ. սեպտեմբերի 20-ի թիվ 1398/2005 որոշում՝ «Գյուղական զարգացման Եվրոպական Գյուղատնտեսական հիմնադրամից գյուղական զարգացմանն աջակցության մասին»):

Ի տարբերություն նախորդ ժամանակահատվածի քաղաքականության, նոր ժամանակահատվածի քաղաքականությունում կատարվել են էական պարզեցումներ: Ներկայումս Գյուղական զարգացումը ֆինանսավորվում է մեկ միասնական աղբյուրից՝ Գյուղական զարգացման Եվրոպական Գյուղատնտեսական հիմնադրամից:

Թիվ 1398/2005 որոշումն առաջարկում միջոցառումների համախմբեր, որոնք միավորվել է այսպես կոչված «առանցքներում», հիմք ընդունելով նպատակների աստիճանակարգությունը:

Առաջին առանցքի միջոցառումներն ուղղված են արտադրության հետագա արդիականացմանը՝ խթանելով կառուցվածքային փոփոխությունները և հիմնական նպատակ ունենալով որակի կատարելագործումը: Արդյունավետության և մրցունակության տեսանկյունից կարևորվում է ֆերմաների կենսունակության, շրջակա միջավայրի պաշտպանության և գյուղական զարգացման սոցիալական բաղադրիչի միջև տրամաբանական հաշվեկշռվածությունը:

Ռ-ացիոնալ հողօգտագործմանն ու շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող միջոցառումներն ամփոփված են **երկրորդ առանցքի** համատեքստում, որի նպատակն է բնապահպանական ծառայությունների հասանելիության երաշխավորումը և հողի կառավարումը: Այս գործունեությունները ուղղված են կայուն գյուղական զարգացման աջակցությանը, խթանելով հողի մենեջմենթն ու բնական միջավայրի ու լանդշաֆթի պաշտպանությունը:

Երրորդ առանցքի շրջանակում նախատեսված միջոցառումներն ուղղված են եկամտաբեր գործունեությունների հնարավորությունների և գյուղական բնակավայրերի ռեզիդենտների կյանքի որակի բարելավմանը, աջակցելով և բարելավելով սոցիալական և տնտեսական ենթակառույցները (մասնավորապես՝ միմյանցից հեռու գտնվող գյուղական բնակավայրերի համար, որոնք բախվում են բնակչության թվաքանակի կրճատման խնդրին):

Բարեփոխումները պարունակում են նաև Լիդեր Համայնքային նախաձեռնության բաղադրիչ, որն ինտեգրվում է Գյուղական զարգացման ծրագրերում:

Հաշվի առնելով ծրագրավորման ընթացակարգը, Անդամ երկրները նախ և առաջ կազմում և ներկայացնում են Ազգային ռազմավարության ծրագրերը: Ծրագրերի կազմման հիմնական նպատակն է ԵՄ առաջնահերթությունների՝ անդամ երկրի առանձնահատկություններին համահունչ արտացոլումը և ԵՄ քաղաքականության հետ համապատասխանության երաշխավորումը: Հաջորդ փուլում, անդամ երկրի կողմից մշակվում և ներկայացվում է Գյուղական զարգացման Ծրագիրը՝ ըստ 4 առանցքների:

Գյուղական զարգացման 2007-2013թթ. քաղաքականությունը (ներառյալ վերը նշված առանցքների մանրամասն նկարագրությունները) առկա են Ինտերնետային էջի հետևյալ հասցեում. http://ec.europa.eu/agriculture/rurdev/index_en.htm: Անդամ երկրների կողմից կազմված՝ Գյուղական զարգացման 2007-2013թթ. ծրագրերն առկա են Ինտերնետային էջի հետևյալ հասցեում. http://ec.europa.eu/agriculture/rurdev/countries/index_en.htm

II. ԵՄ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՄ Զբաղվածության ռազմավարությունը նպատակ ունի օժանդակել Եվրոպական միության անդամ երկրներին ստեղծելու ավելի շատ և «զավ» աշխատատեղեր: «Ավելի շատ և լավ աշխատատեղերն ու սոցիալական համերաշխության ընդլայնումը» հանդիսանում է ԵՄ քաղաքականության համընդհանուր նպատակներից մեկը:

Այդ նպատակն ամրագրված է ԵՄ Եվրոպական Զբաղվածության ռազմավարությունում: Ռազմավարության նպատակն է լրիվ զբաղվածության համար նախադրյալների ձևավորումը՝ 2010թ.: Այն հանդիսանում է ԵՄ անդամ երկրների կողմից զբաղվածության ռազմավարությունների կոորդինացման առանցքային գործիքը:

Ռազմավարությունն ունի երեք հիմնական նպատակ.

- լրիվ զբաղվածություն,
- աշխատանքի որակ և արդյունավետություն,
- սոցիալական համերաշխություն և ներգրավվածություն:

Բացի այդ, այն ներառում է հատուկ նպատակային ցուցանիշներ

- զբաղվածության 70% մակարդակ՝ 2010թ.
- զբաղվածության 60% մակարդակ կանանց համար, 2010թ. և

- զբաղվածության 50% մակարդակ՝ տարիքային աշխատողների (55-64 տակեկան) համար, 2010թ.

Ի թիվս այլ միջոցառումների, տեղական զբաղվածության զարգացումը կարևոր դեր ունի Ռ-ազմավարությամբ նախանշված նպատակներին և «թիրախներին» հասնելու համար: Դրանք արտացոլված են *Զբաղվածության ուղեցույցներում*, որոնք ԵՄ կողմից նախատեսված են անդամ-երկրների կողմից զբաղվածության ծրագրերի մշակման աշխատանքներն ուղղորդելու և Ռ-ազմավարության հետ համադրելիությունն ապահովելու համար: 2003թ. թողարկված Ուղեցույցը հատկապես կարևորում է Անդամ երկրների կողմից տեղական զբաղվածության զարգացումը:

Մեկնարկից հետո (1997թ.) Եվրոպական Զբաղվածության ռազմավարությունը առանցքային դեր է ունեցել ԵՄ քաղաքականությունների համակարգման առումով՝ բոլորի համար բարելավված աշխատանք ապահովելու համար: Եվրոպական Զբաղվածության ռազմավարության եռամյա շրջափուլը հիմնված է հետևյալ բաղադրիչների վրա:

- **Զբաղվածության ուղեցույց**, որը յուրաքանչյուր տարի հաստատվում է Խորհրդի կողմից և Հանձնաժողովի առաջարկությամբ: Ուղեցույցն արտացոլում է զբաղվածության բնագավառում անդամ երկրների ընդհանուր առաջնահերթությունները:

- **Բարեփոխումների ազային ծրագրեր**, որը մշակվում է յուրաքանչյուր անդամ երկրի կողմից, ուղեցույցի դրույթներն ազգային քաղաքականությունում արտացոլելու համար:

- **Զբաղվածության համատեղ հաշվետվություն**, որը հաստատվում է Հանձնաժողովի և Խորհրդի կողմից և որը նկարագրում է ազգային և համայնքային մակարդակով արձանագրված առաջընթացը:

- **Կոնկրետ երկրի համար առանձնահատուկ առաջարկություններ**. Խորհուրդը, Հանձնաժողովի առաջարկությամբ, կարող է հաստատել կոնկրետ երկրի զբաղվածության քաղաքականությանը բնութագրական առանձնահատուկ առաջարկություններ, որոնք այնուհետև անդամ երկրի կողմից արտացոլվում են Բարեփոխումների ազգային ծրագրում:

Յուրաքանչյուր անդամ երկիր մշակում է Բարեփոխումների ազգային ծրագիր (մինչև 2005թ.՝ Ազգային գործողությունների ծրագիր), որը նկարագրում է թե ինչպես է իրականում կիրառվել Զբաղվածության ուղեցույցը՝ ազգային մակարդակում: Այն ներկայացնում է Անդամ երկրի կողմից նախորդ 12 ամիսների ընթացում ձեռք բերված առաջընթացը և հաջորդ 12 ամիսների ընթացքում ծրագրված միջոցառումները: Ըստ էության, դրանք և հաշվետվողական և ծրագրային փաստաթղթեր են:

Վերը նշված նյութերն, ինչպես նաև առավել մանրամասն տեղեկատվություն առկա է Ինտերնետային էջի հետևյալ հասցեում.

http://ec.europa.eu/employment_social/employment_strategy/index_en.htm

III. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն վերլուծության նպատակներից ելնելով, ստորև ներկայացված է նաև գյուղատնտեսության բնագավառում գործազրկության դեպքերից սոցիալական ապահովագրության ԵՄ 10 երկրներում (Նոր անդամ երկրներ) կիրառվող պրակտիկան: Գործազրկության դեպքերից ապահովագրության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ըստ գյուղատնտեսական կոոպերատիվներ ու ընտանեկան (անհատական) ֆերմաներ բաշխվածության:

Մինչ շարունակելը, հարկ է նշել, որ համաձայն ԵՄ օրենսդրության «Գյուղատնտեսական հողիցը սահմանվում է որպես տեխնիկական և տնտեսական առումով միասնական միավոր, որն ունի միասնական մենեջմենթ և որն արտադրում է գյուղատնտեսական արտադրանք: Հողիցը կարող է տրամադրել նաև այլ օժանդակ (ոչ գյուղատնտեսական) արտադրանք»: (Հանձնաժողովի 2002թ. հուլիսի 24-ի No 1444/2002 կանոնակարգը):

Այսպիսով, գյուղատնտեսական հողիցը (կամ ֆերման) սահմանվում է ըստ հետևյալ չափորոշիչների.

- գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն,
- միասնական մենեջմենթ, նույնիսկ եթե այն իրականացվում երկու և ավելի անձանց կողմից համատեղ,
- տեխնիկական և տնտեսական միասնականություն, ինչն արտահայտվում է աշխատանքի և արտադրության միջոցների (մեքենաներ, շինություններ և այլն) միասնական օգտագործմամբ:

Ընդհանուր առմամբ, թե կոոպերատիվների անդամները և թե ֆերմերային տնտեսություններում զբաղվածները ընդգրկված են գործազրկության դեպքերից ապահովագրությամբ: Բոլոր երկրներում էլ, գործազրկության դեպքերից ապահովագրության համակարգում ընդգրկվելու պայմանը աշխատանքային պայմանագրի առկայությունն է: Ամեն դեպքում, որոշիչը ոչ թե սեփականության ձևն է, այլ զբաղվածության կարգավիճակը:

Գործազրկության հայեցակարգը վերաբերում է միայն նրանց, ովքեր տրամադրում են աշխատուժ (աշխատանքի շուկայում) և գտնվում են գործատուի հետ աշխատանքային պայմանագրային հարաբերությունների մեջ:

Նշված երկրներում, գյուղատնտեսությունում զբաղվածներն, որոնք ունեն աշխատանքային պայմանագիր ընդգրկվում են գործազրկությունից ապահովագրության միևնույն համակարգում, ինչ գյուղատնտեսությունից դուրս այլ գործունեությամբ զբաղվողները:

Ըստ երկրներում կիրառվող մոտեցումների, ընտանեկան (անհատական) տնտեսություններում զբաղված ընտանիքի անդամները, կարող են տարանջատվել երկու հիմնական խմբում:

Առաջին խումբ երկրներում գործազրկության դեպքերից ապահովագրությունն ընդհանուր առմամբ չի ներառում ինքնազբաղված ֆերմերներին՝ Լիտվա, Էստոնիա, Լեհաստան, Բուլղարիա և Ռումինիա:

Երկրորդ խումբն ընդգրկում է այն երկրները, որտեղ ինքնազբաղված ֆերմերները ընդգրկված են գործազրկությունից ապահովագրության ընդհանուր համակարգում՝, Լատվիա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա:

Աղյուսակ: Գյուղատնտեսական հատվածում գործազրկության դեպքերից ապահովագրության համակարգի բնութագրիչները՝ ԵՄՆոր անդամ երկրներում

Երկիրը	Ընտանեկան (անհատական) ֆերմաներ	Կոոպերատիվ և այլ ֆերմաներ
Էստոնիա	Չի ներառվում	Պարտադիր
Լատվիա	Չի ներառվում	Պարտադիր
Լիտվա	Չի ներառվում	Պարտադիր
Լեհաստան	Չի ներառվում	Պարտադիր
Չեխիա	Պարտադիր	Պարտադիր
Սլովակիա	Պարտադիր	Պարտադիր
Հունգարիա	Կամավոր	Պարտադիր
Սլովենիա	Կամավոր	Պարտադիր
Ռումինիա	Կամավոր	Պարտադիր
Բուլղարիա	Չի ներառվում	Պարտադիր

Աղբյուրները:

- Երկրների համապատասխան նախարարությունների ինտերնետային էջեր,
- European Commission_DG for Agriculture: “Social security systems and demographic developments in agriculture in the CEE candidate countries”,
- http://ec.europa.eu/employment_social/spssi/missoc_en.htm,
- <http://www.ssa.gov/policy/docs/progdsc/ssptw/2006-2007/europe/index.html>